# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՎԱ-ԱԱՏՄ-ՄԱԾՁԲ-22/17-1»

ք.Երևան «27» 05 2022թ.

Վարչապետի աշխատակազմն ի դեմս Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գ. Բոլյանի, որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷՄԻԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Բաղրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կարիքների համար դեղերի լաբորատոր փորձաքննության և մասնագիտական դիտարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և NN 1.1-1.3 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և NN 1.1-1.3 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և NN 1.1-1.3 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և NN 1.1-1.3 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և NN 1.1-1.3 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության **2 օրինակ** (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 5000000 ( հինգ միլիոն ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և NN 1.1-1.3 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան

պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _4_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և NN 1.1-1.3, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024057
ՀՎՀՀ 02505554

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

### ԿԱՏԱՐՈՂ

«Ակադեմիկոս Է.Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան 0051, Կոմիտաս 49/5
«Ամերիա Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570015951390100
ՀՎՀՀ 02500292

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1*
*«27» 05 2022թ. կնքված*
*«ՎԱ-ԱԱՏՄ-ՄԱԾՁԲ-22/17-1» ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 71911100/16 | **Լաբորատորիական ծառայություններ՝** Դեղի և բժշկական արտադրատեսակի գրանցման կամ հսկման կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվության ծառայություն՝ ըստ յուրաքանչյուր անվանման լաբորատորիական ծառայություն Տեխնիկական բնութագիրը համաձայն կից N 1.1 հավելվածի | դրամ | 3 100 000 | 1 | ՀՀ | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2022թ. |
| 2 | 71911100/17 | **Լաբորատորիական ծառայություններ՝** Արտադրանքի պատկանելիության վերաբերյալ տեղեկատվության ծառայություն՝ըստ յուրաքանչյուր անվանման լաբորատորիական ծառայություն Տեխնիկական բնութագիրը համաձայն կից N 1.2 հավելվածի | դրամ | 500 000 | 1 | ՀՀ | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2022թ. |
| 3 | 71911100/18 | **Լաբորատորիական ծառայություններ՝** Դեղերի լաբորատոր փորձաքննություն Տեխնիկական բնութագիրը համաձայն կից N 1.3 հավելվածի | դրամ | 1 400 000 | 1 | ՀՀ | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2022թ. |

** Ծառայությունների մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:*
****Լաբորատորիական փորձաքննության ավարտից հետո անհրաժեշտ է տրամադրել եզրակացություն:*

## ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024057
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

## ԿԱՏԱՐՈՂ

«Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան 0051 Կոմիտաս 49/5
«Ամերիա Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570015951390100
ՀՎՀՀ 02500292

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
«27» 05 2022 թ. կնքված
«ՎԱ-ԱԱՏՄ-ՄԾՁԲ-22/17-1» ծածկագրով պայմանագրի

# Տեխնիկական բնութագիր-գնացուցակ*

| Այդ թվում | Բնութագիր | Մատուցված ծառայության միավորի գին մեկ փորձաքննության համար /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| Դեղի և բժշկական արտադրատեսակի գրանցման կամ հսկման կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվություն | ըստ յուրաքանչյուր անվանման | 3000 |
| **Ընդամենը** | | 3000 |

*Հիմք ընդունելով Դեղերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 29րդ հոդվածի 1 կետը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024057
ՀՎՀՀ 02505554

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ակադեմիկոս Է.Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան 0051,Կոմիտաս 49/5
«Ամերիա Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570015951390100
ՀՎՀՀ 02500292

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.2
«27» 05 2022թ. կնքված
«ՎԱ-ԱԱՏՄ-ՄԱԾՁԲ-22/17-1» ծածկագրով պայմանագրի

# Տեխնիկական բնութագիր-գնացուցակ*

| Այդ թվում | Բնութագիր | Մատուցված ծառայության միավորի գին մեկ փորձաքննության համար /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| Արտադրանքի պատկանելիության վերաբերյալ տեղեկատվություն | ըստ յուրաքանչյուր անվանման | 20000 |
| **Ընդամենը** | | 20000 |

*Հիմք ընդունելով Դեղերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 29րդ հոդվածի 1 կետը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024057
ՀՎՀՀ 02505554

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ակադեմիկոս Է.Գաբրիելյանի անվան
դեղերի և բժշկական տեխնոլոգիաների
փորձագիտական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան 0051 Կոմիտաս 49/5
«Ամերիա Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570015951390100
ՀՎՀՀ 02500292

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1.3*
*«27» 05 2022թ. կնքված*
*«ՎԱ-ԱԱՏՄ-ՄԾՁԲ-22/17-1» ծածկագրով պայմանագրի*

# Տեխնիկական բնութագիր-գնացուցակ*

| Այդ թվում | Բնութագիր | Մատուցված ծառայության միավորի գին մեկ փորձաքննության համար /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| Դեղի,դեղանյութի,դեղաբուսական հումքի նկարագրություն | փորձաքննություն | 8000 |
| Դեղի,դեղանյութի գունայնության | փորձաքննություն | 8000 |
| Դեղի,դեղանյութի թափանցիկության | փորձաքննություն | 8000 |
| Դեղի,դեղանյութի տեսանելի մասնիկների/մեխանիկական խառնուրդների | փորձաքննություն | 8000 |
| Ընդհանուր զոլերի/սուլֆատային զոլերի | որոշում | 10000 |
| Անօրգանական անիոն Անօրգանական անիոնների (քլորիդներ, սուլֆատներ, նիտրիտներ և այլն), կատիոնների (երկաթ, պղինձ և այլն) | որոշում | 10000 |
| Հեղուկ դեղաձևերի նոմինալ/կորզման ծավալի | որոշում | 8 000 |
| Հեղուկի խտության | որոշում | 10 000 |
| Հեղուկի pH-ի | որոշում | 8 000 |
| Հեղուկի էլեկտրահաղորդականության | որոշում | 8 000 |
| Դեղի օսմոլյալության/օսմոլյարության | որոշում | 20 000 |
| Մածուցիկության | որոշում | 10 000 |
| Դեղահատի, դեղապատիճի և մոմիկի տրոհելիության | որոշում | 10 000 |
| Դեղահատի մաշվելիության | | 10 000 |
| Նյութի հալման ջերմաստիճանի | որոշում | 8 000 |
| Նյութի եռման ջերմաստիճանի | որոշում | 5 000 |
| Դեղի, նյութի բեկման ցուցիչի | որոշում՝ ռեֆրակտոմետրի միջոցով | 8 000 |
| Դեղի, դեղանյութի խոնավության որոշում (LOD) | | 8 000 |
| Դեղի, դեղանյութի նկարագրության և ֆիզիկաքիմիական հատկորոշիչների համալիր, քանակական վերլուծություն, լուծելիություն (առանց մանրէաբանական մաքրության և կողմնակի խառնուրդների որոշման) | փորձաքննություն | 150 000 |
| Դեղի, դեղանյութի նկարագրության և ֆիզիկաքիմիական հատկորոշիչների համալիր, քանակական վերլուծություն, լուծելիություն, կողմնակի խառնուրդների որոշում (առանց մանրէաբանական մաքրության որոշման) | փորձաքննություն | 250 000 |
| 19-րդ և 20-րդ կետերում նշված փորձաքննություններին յուրաքանչյուր լրացուցիչ 1 բաղադրիչ ավելացնելիս հավելյալ վճար | փորձաքննություն | 15 000 |
| Նյութի քանակական | որոշում՝ տիտրացիայի մեթոդով | 20 000 |
| Ջրի քանակական | որոշում՝ Կարլ Ֆիշերի մեթոդով | 30 000 |
| Նյութի որակական և քանակական | փորձաքննություն՝ ուլտրամանուշակագույն սպեկտրոֆոտոմետրիայի մեթոդով | 30 000 |
| Նյութի որակական և քանակական | փորձաքննություն՝ բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի մեթոդով | 100 000 |
| Նյութի որակական և քանակական | փորձաքննություն՝ նրբաշերտ քրոմատոգրաֆիայի մեթոդով | 20 000 |
| Նյութի օպտիկ պտույտի, կոնցենտրացիայի և քանակական պարունակության | որոշում՝ պոլյարիմետրիայի մեթոդով | 15 000 |
| Մետաղների որակական և քանակական | որոշում՝ ատոմային աբսորբցիոն սպեկտրաչափմամբ | 120 000 |
| Ցնդող նյութի | որոշում՝ գազային քրոմատոգրաֆիա-մասսսպեկտրաչափմամբ | 50 000 |
| Մնացորդային լուծիչի | որոշում՝ գազային քրոմատոգրաֆիա,-քրոմատոգրաֆիա-մասսսպեկտրաչափմամբ | 150 000 |
| Ցնդող նյութի | որոշում՝ հեղուկային քրոմատոգրաֆիա մասսսպեկտրաչափմամբ արժեք | 50 000 |
| Մնացորդային լուծիչի | որոշում՝ հեղուկային քրոմատոգրաֆիա,-քրոմատոգրաֆիա-մասսսպեկտրաչափմամբ | 150 000 |

| | | |
|---|---|---|
| | քրոմատոգրաֆիա-մասսսպեկտրաչափմամբ | 150 000 |
| Դեղահատի և դեղապատիճի լուծելիության | որոշում՝ բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի մեթոդով | 100 000 |
| Դեղահատի և դեղապատիճի լուծելիության | որոշում՝ ուլտրամանուշակագույն սպեկտրոֆոտոմետրիայի մեթոդով | 80 000 |
| Միաբաղադրատարր դեղում խառնուրդների | որոշում | 150 000 |
| Բազմաբաղադրատարր դեղում խառնուրդների | որոշում | 200 000 |
| Շաքարի որոշում | (ռեֆրակտոմետրիա) | 5 000 |
| Ջրալույծ վիտամինների | որոշում՝ բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի մեթոդով | 150 000 |
| Ճարպալույծ վիտամինների | որոշում՝ բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի մեթոդով | 150 000 |
| Դեղաբուսական հումքի դեղագրքային չկիրառելով բարձրարդյունավետ հեղուկային կամ գազային քրոմատոգրաֆիայի մեթոդները | վերլուծություն | 60 000 |
| Ածխաջրերի | որոշում՝ բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի մեթոդով | 150 000 |
| Միաբաղադրատարր դեղի քանակական վերլուծության մեթոդի վալիդացիա՝ բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի մեթոդով | վերլուծության մեթոդի վալիդացիա | 800 000 |
| Բազմաբաղադրատարր դեղի քանակական վերլուծության մեթոդի վալիդացիա՝ բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի մեթոդով | վերլուծության մեթոդի վալիդացիա | 1 200 000 |
| Միաբաղադրատարր դեղի քանակական վերլուծության մեթոդի վալիդացիա՝ գազային քրոմատոգրաֆիայի մեթոդով | վերլուծության մեթոդի վալիդացիա | 750 000 |
| Բազմակոմպոնենտ դեղերի քանակական վերլուծության մեթոդի վալիդացիա գազային քրոմատոգրաֆիայի մեթոդով | վերլուծության մեթոդի վալիդացիա | 1 200 000 |
| Միաբաղադրատարր դեղահատի և դեղապատիճի լուծելիության որոշման մեթոդի մշակում և վալիդացիա | մեթոդի մշակում և վալիդացիա | 1 200 000 |
| Բազմաբաղդարատարր դեղահատի և դեղապատիճի լուծելիության որոշման մեթոդի մշակում և վալիդացիա | մեթոդի մշակում և վալիդացիա | 1 500 000 |
| Դեղի կենսահամարժեքության in vitro | որոշում | Ըստ պայմանագրի |
| Բակտերիալ էնդոտոքսինների առկայության | որոշում | 50 000 |
| Սինթետիկ ծագման դեղի և դեղանյութի մանրէաբանական մաքրության | որոշում | 50 000 |
| Բուսական և կենդանական ծագման դեղի և դեղանյութի մանրէաբանական մաքրության | որոշում | 85 000 |
| Մանրէների, խմորասնկերի հայտնաբերում և հաստատում՝ API համակարգով (API test) | հայտնաբերում և հաստատում | 85 000 |
| Մանրէազերծվածության | որոշում՝ մեմբրանային ֆիլտրացիայի եղանակով (առանց սպեցիֆիկ ռեագենտ օգտագործելու) | 85 000 |
| Մանրէազերծվածության | որոշում՝ ուղիղ ցանքսի եղանակով | 25 000 |
| Բակտերիաների և սնկերի | քանակական որոշում | 32 000 |
| Պաթոգենի որակական/ քանակական (E.coli, St. aureus. Ps. aeruginosa, Salmonella spp, Enterobactereaceae, Candida albicans),ըստ յուրաքանչյուր մանրէի | որոշում | 20 000 |
| Պաթոգենի որակական/ քանակական (E.coli, St. aureus. Ps. aeruginosa, Salmonella spp, Enterobactereaceae, Candida albicans) և հաստատում՝ API համակարգով (API test), ըստ յուրաքանչյուր մանրէի | Որոշում, API test | 85 000 |
| Մանրէազերծվածության | որոշման մեթոդի վալիդացիա/վերիֆիկացիա | 750 000 |
| Հակասեպտիկ ակտիվության | որոշում | 120 000 |
| Պրոբիոտիկի մանրէաբանական մաքրության և քանակական պարունակության | որոշում | 350 000 |
| Պրոբիոտիկի | հայտնաբերում և հաստատում | 350 000 |
| Հակաբիոտիկի մնացորդային քանակների | որոշում՝ բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի մեթոդով | 50 000 |
| Հակաօքսիդանտների | որոշում տարբեր նմուշներում՝ բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի մեթոդով | 50 000 |
| Բետա-ագոնիստների | որոշում տարբեր նմուշներում (տարբեր տեսակի սնունդ և սննդամթերք)՝ բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի մեթոդով | 50 000 |
| Դեզօքսինիվալենոլի | որոշում՝ բարձրարդյունավետ հեղուկային | |

| | | |
|---|---|---|
| | քրոմատոգրաֆիայի մեթոդով | |
| Ձեռապլենոնի | որոշում՝ բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի մեթոդով | 66 000 |
| Բենզապիրենի | որոշում՝ բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի մեթոդով | 45 000 |
| **Ընդամենը** | | 11 401 000 |

*Հիմք ընդունելով Դեղերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 29րդ հոդվածի 1 կետը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024057
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ակադեմիկոս Է.Գաբրիելյանի անվան
դեղերի և բժշկական տեխնոլոգիաների
փորձագիտական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան 0051 Կոմիտաս 49/5
«Ամերիա Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570015951390100
ՀՎՀՀ 02500292

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«27» 05 2022թ. կնքված
«ՎԱ-ԱԱՏՄ-ՄԱԾՁԲ-22/17-1» ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71911100/16 | **Լաբորատորիական ծառայություններ**՝ Դեղի և բժշկական արտադրատեսակի գրանցման կամ հսկման կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվության | 0 | 0 | 0 | 0 | 0 | 930 000 | 1 860 000 | 1 860 000 | 1 860 000 | 3 100 000 | 3 100 000 | 3 100 000 | 3 100 000 |
| 2 | 71911100/17 | **Լաբորատորիական ծառայություններ**՝ Արտադրանքի պատկանելիության վերաբերյալ տեղեկատվության ծառայություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 150 000 | 300 000 | 300 000 | 300 000 | 500 000 | 500 000 | 500 000 | 500 000 |
| 3 | 71911100/18 | **Լաբորատորիական ծառայություններ**՝ Դեղերի լաբորատոր փորձաքննություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 420 000 | 840 000 | 840 000 | 840 000 | 1 400 000 | 1 400 000 | 1 400 000 | 1 400 000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024057
ՀՎՀՀ 02505554

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ակադեմիկոս Է.Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան 0051, Կոմիտաս 49/5
«Ամերիա Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570015951390100
ՀՎՀՀ 02500292

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«27» 05 2022թ. կնքված
«ՎԱ-ԱԱՏՄ-ՄԱԾՁԲ-22/17-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________

______________________

գտնվելու վայրը ____________

հհ ______________________

հվհհ ____________________

Պատվիրատու

______________________

______________________

գտնվելու վայրը ____________

հհ ______________________

հվհհ ____________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«27» 05 2022թ. կնքված
«ՎԱ-ԱԱՏՄ-ՄԱԾՁԲ-22/17-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N ...
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն